

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2008 թվականի
դեկտեմբերի 18-ի N 1563 - Ն որոշման

«ՄԵՎԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ ՍԱՀՄԱՆԻՑ ԴՈՒՐՄ` ԴԵՊԻ ՑԱՄԱՔ
ՄԻՆՉԵՎ 500 ՄԵՏԸ ԼԱՅՆՈՒԹՅԱՄԲ ՇԵՐՏՆ ԸՆԴԳՐԿՈՂ
ՏԱՐԱԾՔՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Տ Ե Խ Ն Ի Կ Ա Կ Ա Ն Բ Ն ՈՒ Թ Ա Գ Ր Ե Ր

ԼՈՂԱՓԻ ԵՎ ԲՈՒՖԵՐԱՅԻՆ ԳՈՏԻՆԵՐԻ ԿԱՀԱՎՈՐՄԱՆ ՈՒ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐՈՎ
ԱՊԱՀՈՎՄԱՆ ՏԱՐՐԵՐԻ

1. Լողափի գոտու տարածքի կահավորման և սարքավորումների տարրերի տեխնիկական բնութագրերն են՝

1) հանդերձարան-խցիկներ (հանգստացողների 20 տոկոսի հաշվարկով՝ 100 մարդու համար՝ 5 խցիկ, 1 մարդու համար՝ 1,2-1,3 քառ. մետր մակերեսով).

2) սոլյարիում (հանգստացողների 30 տոկոսի հաշվարկով՝ 1 մարդու համար՝ 3-5 քառ. մետր մակերեսով).

3) օդահարթակ-աերարիում (հանգստացողների 8-10 տոկոսի հաշվարկով՝ 1 մարդու համար՝ 3,5-4,5 քառ. մետր).

4) տենտեր, հովանոցներ (հանգստացողների 30 տոկոսի հաշվարկով՝ 1 մարդու համար՝ 3,5 քառ. մետր).

5) լողափի գոտու մանկական հատվածը կարող է կահավորվել տոբոգանով ($H = 2,5-3,0$ մետր՝ մեկ ելքով դեպի լիճ), շվաքարաններով, ավազամաններով, մանկական ջրավազաններով, ճոճանակներով, ընդ որում, մանկական հատվածի լողալու գոտու հատակը պետք է ունենա փոքր թեքություն՝ ոչ ավելի, քան 70 սանտիմետր խորությամբ.

6) աղբանոթներ՝ 50 մարդու համար՝ 1 աղբանոթ հաշվարկով.

7) լողափի գոտու տարածքի մակերեսը որոշվում է՝ ելնելով մեկ չափահաս հանգստացողի համար՝ առնվազն 8 քառ. մետր, մեկ երեխայի համար՝ առնվազն 5 քառ. մետր հաշվարկից, ընդ որում, լողափի գոտու եզրագծի նվազագույն ձգվածությունը մեկ

մարդու համար կազմում է **0,25** մետր, իսկ լողալու գոտու ջրի հայելու մակերեսը՝ մեկ մարդու համար՝ **10** քառ. մետր:

2. Բուֆերային գոտու տարածքի կահավորման և սարքավորումների տարրերի տեխնիկական բնութագրերն են՝

1) դրամարկդային տաղավարները՝ վճարովի ծառայություններ տրամադրող լողափերում (առանձին տաղավարի տեսքով կամ վարչական մասի կազմում՝ **1** դրամարկդը՝ **0,5-1,0** հազ. հաճախորդի համար հաշվարկով).

2) ցնցուղարանները (**75** մարդու համար՝ **2-4** ցնցուղ, բայց առնվազն **2** ցնցուղ հաշվարկով), խմելու ջրի ծորակները (**200-300** մարդու համար՝ **1** ծորակ, բայց առնվազն **1** ծորակ հաշվարկով): Թույլատրվում է ցնցուղարանների ջուրը տաքացնել արևի ճառագայթների ջերմությամբ.

3) զուգարանները, որոնք տեղադրվում են լողափի գոտուց առնվազն **50** մետր հեռավորության վրա (**50** մարդու համար՝ **1** զուգարանակոնք և **1** միզաման, բայց առնվազն **2** զուգարանակոնք և **1** միզաման).

4) աղբի կոնտեյներները, որոնք պետք է ունենան կողպվող կափարիչներ, տեղադրված լինեն հարթակների վրա և ունենան հարմար մերձատար ուղիներ.

5) բուֆերային գոտում կարող են տեղադրվել գույքի վարձույթի կետեր, բուժկետ, սրճարան-տաղավարներ, առևտրի կրպակներ (հյուրեր, պաղպաղակ և այլ սննդամթերք, հուշանվերներ, լողի պարագաներ և այլն), լողափի սպասարկումն ապահովող այլ ոչ հիմնական օբյեկտներ.

6) բուֆերային գոտու սպորտային հատվածը կարող է ներառել վոլեյբոլի, բադմինթոնի և այլ մարզահրապարակներ, ինչպես նաև այլ հարթային շինություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ
ՍԱՐԳՍՅԱՆ

Դ.